

գրտօրէն կը պատկերացնէ իր ժամանակի վանական կեանքը. պարսկական և արաբական արչաւանքներէն յառաջ Պաղեստինի բազմաթիւ վանքերուն պատկերը կու տայ մեզի տեղեկագրական մանրամասն պարագաներով. յայտնի է թէ քանիցս այցելած է այդ վանքերը: Կրտի վանքի մասին տեղեկութիւններ կու տայ իր Մարգ Հոգեւոր գիրքին ԺԹ. ձԼԵ. ձԼԶ. ձԼԸ. ձԿԵ. գլուխներուն մէջ (*). կը գրէ թէ Կրտի վանքը կը գտնուի Երիքովի մէջ, Յորդանանի մօտիկ. կը յիշատակէ նոյն վանքին վանահայրերէն Նիլիա՝ որ իբր թէ Երուսաղէմի Մակար արքեպիսկոպոսին հետ յարաբերութիւն չընելու համար քաշուած է այս վանքը. Նիկոնիսը՝ որ երբեմն ալ Կիլիկիոյ կուսանօցներէն միոյն մեծաւորն եղած է. Յովիաննիսը՝ որուն առակաւոր պատմութիւնները և կեանքին հետաքրքրական դրուագները կու տայ: Կ'երևի որ թէ՛ Կրտի վանքի և թէ՛ ուրիշ վանքերու մասին իր գրածները զանազան ժամանակի իր այցելութեանց ծանօթագրութիւններն են. այդ պատճառաւ իր գիրքին մէջ չէ պահուած դէպքերու և դէմքերու ժամանակագրական կարգը. բայց պէտք է խօստովանիլ թէ իր դարու վանքերու տեղագրութեան համար կարևոր գիտելեաց ծաղկաստան մ'է, ըստ իր յորջորջման:

2.— Կրտի վանքին ծագման պատմական ճշգուհները պարզելէ յետոյ հարկ է անոր հայեցի հանգամանքն ալ ճշդել. և որպէս զի մեր ձեռքը գտնուած համառօտ յիշատակարանին ոյժը և ճշգրտութիւնը կարենանք արժեցնել, պէտք է որ Կրտի վանքին գնման և վաճառման դարուն Երուսաղէմի եկեղեցիին դաւանական վիճակը և շեղումները փութանք պարզել:

Ծանօթ է եկեղեցական պատմութենէն թէ Քաղկեդոնի ժողովը շեղելով երեք Տիեզերական ժողովներու գաւանական ըսկզբունքներէն՝ պատճառ դարձաւ կարգ մը հերձուածներու և եկեղեցեաց պառակտումին: Երկաբնակութեան խլրտումներէն Արևելքի քրիստոնեաները դժգոհ մնացին: Մարկիանոսի զինու զօրութեամբ Երուսաղէմի եկեղեցիին հանդէպ կատարած ոչ-կանո-

(*) Մեր «Վարք Հարանց»ի հայ թարգմանիչը քանի մը կտորներ առած և թարգմանած է Մոսքոսի գիրքէն. ստորև յիշուած երեք վանահայրերէն առաջին երկուքը կը յիշատակէ Ներքինեաց վանիկն հետ (Վարք Հարանց, Հատ. Ա. էջ 610, Բ. 391):